

Նուէր Մանուկներին

ՕՍԿԱՐ ՌԻԱՑԼԻԴ



ԱՍԴԱՄԱՆՈՒԿ

ՀԵՐԻՍԹ.

Թարգմ.

ԿԱՐ. ՄԻՐԻԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Կիբեռ. տպ. Օր. Ն. Աղանեանի Պոլից., 7.

1911

825
№-13

M

825
DL-13

ՀԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԵՐԻԿ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

1. Վայրի կարապներ (սպառուած)	8
2. Առաջին վիշտ (սպառուած)	10
3. Անտառապահը (սպառուած)	12
4. Աշխէնն ու Մարգարիտը (սպառ.)	10
5. Աղքատի բախտը (սպառ.)	5
6. Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.)	10
7. Նելլօն ու Պատրաշը (սպառ.)	10
8. Թիւղու (սպառ.)	20
9. Կենդանին է արդեօք (սպառ.)	8
10. Բարեկամներ (սպառ.)	12
11. Առակներ ընական պատմութիւնից (սպառ.)	12
12. Մազնիս	12
13. Արջի պատմութիւնը	15
14. Ռզնիներ	8
15. Թմփիկը (սպառ.)	12
16. Լեռան աղջիկը (սպառ.)	20
17. Բու	12
18. Փոքրիկ Պարոյրի արկածները	15
19. Փիղ	8
20. Ռուբէնի զբաղմունքը	25
21. Որը Աննան	12
22. Արցունք	15
23. Անձնազո՞ւ մանուկ	11
24. Դարեւոր կաղնի	6

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼ'Դ

ԱՍՏՂԱՄԱՆՈՒԿ

ՀԷՐԻՍԹ

Թարգմ.

ԿԱՐ. ՄԻՐԻԱՆԵՐԻՆ

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Ելեքտրական տպ. Օր. Ն. Աղանեանի, պոլից. 7.
1911

26.08.2013



Ուշերեկոյեան երկու խեղճ փայտահատառներն էին վերադառնում. Նրանք անցնում էին սոճու մեծ անտառի միջով։ Զմեռ էր ցրտաշունչ սառնամանիքը կաշկանդել էր ողջ բնութիւնը. գետինն ու ծառերի ձիւղերը ծածկուած էին ձիւնի հաստշերտով։ Ճամփորդները գնում էին շաւզով ու նրանց ոտների տակ անդադար ճրթճըրթում էր ճանապարհի երկու կողմերում թափթփուած մանր ցախը։ Լեռնային վտակին հասնելով ճամփորդները նկատեցին, որ նա կախուել է օդի մէջ, երկի Սաոցէ Թագաւորն էր համբուրել նրան։

Այնպէս ցուըտ էր. որ մինչև իսկ զազաններն ու թռչունները նեղն էին ընկել։

Բարձրագագաթ եղևնու փչակում ապրող փոքրիկ սկիւռները գնչիկները իրար էին ըլս-



63952-67

9

մսում, որ տաքանան. իսկ ճագարները որջերում կծկուած, նոյն իսկ չէին համարձակուում զլուխները դուրս հանել որջի բերանից: Ու անտառի բոլոր կենդանիների մէջ, կարծես, միմիայն բուէճներն էին ուրախ այդ սոսկալի եղանակին: Նրանց բմբուխներն ու թևերը թէպէտ բոլորովին ծածկուել էին եղեամով, բայց նրանք ուշադրութիւն չէին դարձնում դրա վրայ և իրենց կլորակ, դեղնագոյն աշքերը շրջելով ձայն էին տալիս միմեանց ամբողջ անտառում:

—Թիու-հըւիթ, թիու-հնր, թիու-հըւիթ,
թիու-հնր, ինչ հրաշալի եղանակ է այսօր:

Հետզհետէ աւելի ու աւելի առաջ էին զընում փայտահատները, ժամանակ առ ժամանակ սառած մատները տաքացնելով ուժգին շնչով. շտապ քայլում էին նրանք, և երկաթէ պայտերով ահագին կօշիկները չխկչխկում էին տափտափած ձիւնի վրայ: Մի տեղ խորունկ թաղուեցին ձիւնի տակ և մի կերպ տակից դուրս գալովնմանում էին ալիւր աղացող ջրաղացպանների. մի ուրիշ տեղ սայթաքուեցին ճահճի պինդ սառոցի վրայ, և նրանց շալակները ցրիւ եկան, այնպէս որ ստիպուած էին ցախը ժողովել ու նորից կապել. իսկ մի անգամ էլ թուաց, թէ մոլորուել են անտառում և ահից սոսկացին: Բայց երկար թափառելուց յետոյ մի կերպ գտան կորցրած շաւիղը և զգոյշ առաջ գնալով, վերջա-

պէս, հասան անտառի ծայրին. այնտեղից հեռու հովտում նկատեցին իրենց գիւղի ճրագները:

Այնպէս սաստիկ ուրախացան, որ սկսեցին բարձրաձայն ու զուարթ ծիծաղել: Եւ երկիրը նրանց աչքին երևում էր որպէս արծաթէ ծաղիկ, իսկ լուսինը շողջողում ոսկէ ծաղկի պէս:

Բայց հէնց որ անցաւ բերկրանքի առաջին ոգևորութիւնը, յիշեցին իրենց խեղճ ու կրակ վիճակը և նորից տիրութեան մէջ ընկան:

—Ի՞նչ հարկ կար ուրախանալու, —ասում է նրանցից մէկը, —ախը մենք լաւ գիտենք, որ կեանք հարուստներն են վայելում և ոչ թէ մեզպէս անճարները: Աւելի լաւ չէր լինի արդեօք սառչէինք անտառում, կամ մի կատաղի գաղանի ճանկն ընկնելով պրծնէինք միանգամից:

—Արդարեւ, —պատասխանում է ընկերը, —անչափ շատ է տրուել ոմանց և սաստիկ քիչ՝ միւսներին. անարդարութիւնն է բաժանել աշխարհիս բարիքները, և արար աշխարհում միմիայն վիշտն է արդարացի բաժին ընկել բոլորին:

Մինչ դեռ նրանք այսպէս դառն գանգատում էին իրենց վիճակից, տարօրինակ բան է տեղի ունենում. երկնքից մի գեղեցիկ, փայլուն աստղ է վայր ընկնում. սահում է երկնակամարի վրայ, սրբնթաց անցնում միւս բոլոր հա-

մաստեղութիւնների մօտով և ընկնում—որպէս
թուաց նրա թոփքին հիացմունքով հետևող
ճամփորդներին—ուռինների շարքի յետևում,
փարախի մօտ, իրենցից ընդամենը մի քանի
քայլ հեռու:

—Այ մարդ, հաւատա, գանձ էր ընկածը,—
բացականչում են ճամփորդները և ձեռ ու ոտ
ընկնում, այնքան շահասէր են լինում նրանք:

Ճամփորդներից մէկը, որ աւելի արագ էր
վազում, առաջում է, անցնում ուռինների մի-
ջով և նրանց յետևում, սպիտակ ձիւնի վրայ
իսկապէս տեսնում է մի ոսկէ առարկայ: Նա
անմիջապէս վազում է այն կողմը և կոանալով
վերցնում է փայլուն իրը. դա ոսկով գործուած
մի վերարկու էր աստղերով զարդարուած ու մի
քանի տակ ծալած: Իսկոյն ձայն է տալիս ըն-
կերին, թէ արդէն գտել է երկնքից վայր ընկած
գանձը. ընկերը շտապ մօտենում է, նրանք նըս-
տում են ձիւնի վրայ և սկսում են բաց անել
վերարկուն, որպէսզի բաժանեն նրա միջի
ոսկէ դրամները: Բայց աւաղ. ոչ ոսկի է
լինում այնտեղ, ոչ արծաթ և ոչ էլ որևէ է
թանգագին բան, այլ միայն...մի փոքրիկ քնած
երեխայ:

Այն ժամանակ փայտահատներից մէկը
ասում է.

—Այսպէս էլ դառն հիասթափութիւն. տես

ինչ վերջ ունեցան մեր յոյսերը . Էհ, երեխ
քոռ է մեր բաղդը. ինչներիս է պէտք երեխան.
Ի՞նչ շահ նրանից: Զգենք այստեղ և շարունա-
կենք մեր ճամփան. ախր մենք ինքներս խեղճ
ու կրակ լմարդիկ ենք և, բազմաթիւ երեխա-
ների տէր լինելով, իրաւունք էլ չունենք օտար
երեխայի համար մեր հարազատների բերանի
պատառը խլել:

Բայց ընկերն առարկում է.

—Ո՛չ, անկարելի բան է. մենք խիստ ան-
գութ կըլինենք եթէ երեխային ձգենք գնանք:
Թէկ ես նոյնչափ խեղճ եմ, որքան և դու, թէկ
ծանրաբեռնուած եմ բազմանդամ ընտանիքով,
և տունս էլ զերծ չի կարիքներից, բայց և այն-
պէս այս երեխային կըտանեմ տուն և կնոջս
խնամքին կըյանձնեմ:

Ասում է, զգուշութեամբ վեր առնում
մանկանը, պինդ-պինդ փաթաթում է վերար-
կուի մէջ, որպէսզի չմըսի, ապա կամաց-կա-
մաց ցած է իջնում բլրով դէպի իրենց գիւղը:
Իսկ ուղեկիցը մնում է զարմացած իր ընկերոջ
այս թեթեամիտ փափկասրտութեան վրայ:

Գիւղ մտնելուն պէս նա ասում է ընկերին.

—Երեխան դու վերցրիր, գոնէ նրա վերար-
կուն տուր ինձ. չէ՞ որ պարտաւոր ես կիսել
միասին գտածը:

Իսկ նա պատասխանում է.

—Ո՞չ, որովհետև վերարկուն ոչ քոնն է և
ոչ էլ իմը, այլ մանկան սեփականութիւնն է:—
Ու նրան մնաս բարով ասելով մօտենում է իր
տանը և դուռը բաղխում:

Կինը բաց է անում դուռը և, մարդուն ողջ
ու առողջ տեսնելով, զրկում համբուրում է
նրան, ապա վայր է բերում ցախը ուսից և նրա
կօշիկների ձիւնը թօթափելով, խնդրում է որ
մտնի:

Բայց նա շէմքը չկոխած ասում է կնոջը.

—Ա կնիկ, ես բան եմ գտել անտառում և բե-
րել եմ քեզ, որ դու նրան խնամես ու պահես:

—Ի՞նչ ես գտել, բեր տեսնեմ,—բացական-
չում է կինը:—Մեր տունը դատարկ, մեր կա-
րիքները շատ:

Վերարկուն բաց անելով մարդը ցոյց է
տալիս քնած մանուկը:

—Այ մարդ, —ասում է կինը, —մեր երե-
խէքը հերիք չեն, որ դեռ մէկն էլ ուզում ես
աւելացնել նրանց թուխն: Ի՞նչ գիտես թէ այդ
երեխան մի նոր ցաւ, մի նոր դժբախտութիւն
չի բերի մեր զլուխը: Եւ կամ ինչպէս կարող
ենք նրան պահել:

Ու բարկանում է մարդու վրայ:

—Ե՛ մի դու էլ, —առարկում է մարդը, —
ախը սա Աստղամանուկ է:

Եւ նա մի առ մի պատմում է կնոջը թէ

ինչպիսի օտարոտի պարագաներում էին գտել
երեխային:

Բայց այնուամենայնիւ կինը չի հաշտուում
և մարդուն ծաղրելով ասում է բարկացած.

—Մեր երեխէքը զուրկ են ամենաանհրա-
ժեշտ բաններից, իսկ դու օտար երեխայ ես բե-
րում, որ մեծացնենք: Երանի իմանամ, ով է
զլուխ ցաւացնում մեզ համար, ով է օգնու-
թեան ձեռք մեկնում մեզ:

—Այն, բայց Աստուած քաղցած չի թողնում
նոյն իսկ ճնճղուկներին, —ասում է մարդը:

—Կարծես թէ ճնճղուկները ձիւն ձմռանը
չեն կոտորւում սովից, —վրայ է բերում կինը:—
Եւ ասա տեսնեմ թէ հիմա ձմեռ չի մեզանում:

Փայտահատը պատասխան չի տալիս, մնում
է դուն շէմքումը կանգնած:

Այդ ժամանակ փչում է ցրտաշունչ բա-
մին և կնոջը ստիպում է կուչ գալ ցրտից. դող-
դողալով նա ասում է մարդուն.

—Դուռը փակիր, այ մարդ: Քամին ու
մըրիկը ներս են խուժում—ցուրտ է:

—Հոգու ջերմութեամբ չտաքացած տունը
միշտ ցուրտ է լինում, —պատասխանում է
մարդը:

Կինը էլ ոչինչ չի ասում ու մօտենում է
օջախին:

Մի փոքր ժամանակից յետոյ նա շուռ է

գալիս ու արտասուալից աչքերով նայում մարդուն:

Եւ մարդը արագ մտնում է սենեակը ու քնած երեխան յանձնում կնոջը. կինը համբուրում է երեխային ու դնում անկողնում իր հարազատ տղայի կողքին: Հետևեալ առաւօտը փայտահատը թանգագին վերարկուն վերցնում դնում է սնգուկը, ուր կինը պահած էր մանկան վզից կախած սաթէ մանեակը:

Անցնում է մի քանի տարի:

Աստղամանուկը աճում մեծանում է փայտահատի զաւակների հետ միասին. ուտում է նրանց հետ միևնույն ամանից և մասնակցում նրանց բոլոր խաղերին: Ու տարեցտարի նա աւելի ու աւելի է գեղեցկանում. այդ հանգամանքը մեծ զարմանք էր պատճառում գիւղացիներին, որովհետեւ իրենք կոպիտ էին, թուխ ու սեամազ, իսկ Աստղամանուկը նրբակազմ էր ու սպիտակ, ասես փղոսկրից լինէր յղկուած. նրա գանգուրները նման էին ոսկէ-ծաղկի ոլորտներին, շրթունքներն ասես ալ ծաղկաթերթեր լինէին, աչքերը մի-մի մանուշակ էին վճիտ աղբիւրի մօտ բացուած, իսկ ամբողջ կազմուածքը կասես նարգիզ լինէր հնձուորի ձեռք չդիպած կոյս արօտում ծաղկած:

Բայց հէնց այդ գեղեցկութիւնն էր, որ թըշուառացրեց նրան: Աստղամանուկը մեծանալով

հպարտ, խստասիրտ ու ինքնասէր է դառնում: Նա սկսում է արհամարհել փայտահատի զաւակներին և գիւղի բոլոր մանուկներին՝ նրանց «ստոր ծագման» պատճառով. իսկ ինքը պարծենում է իր «ազնիւ ծագումով» ասելով որ Աստղից է սերուել. նա բոլոր երեխաներին հնազանդեցնում է իրեն և իշխում է նրանց վրայ: Զի խղճումն ոչ աղբատին, ոչ կոյր ու կաղին և ոչ էլ թշուառ ու դժբախտ մարդկանց. բարեբով հալածում է նրանց, քշում դէպի բանուկ ճանապարհները, որպէսզի այնտեղ մուրան, այնպէս որ բացի ամենաթշուառներից ոչ մի մուրացկան երկրորդ անգամ ուաք չէր կոխում այդ գիւղը:

Նա կարծես ամբողջովին անձնատուր է լինում գեղեցկի պաշտամունքին, սկսում է անողորմ կերպով ծաղրել անկարներին ու այլանդակներին և առիթ չէր բաց թողնում ծանակի տառերայ դարձնելու նրանց: Նա սիրում էր միայն ինքն իրեն և ամառը, մեղմ եղանակներին, ժամերով նստում էր քահանայի այգում ջրհորի մօտ, դիտում էր իր դէմքի արտացոլումը ջրի մէջ և մեղմիւ ժպտում գոհունակութիւնից, այնպէս զմայլում էր իր գեղեցկութեամբ:

Փայտահատն ու կինը միշտ կշտամբում էին նրան.

— Զե՞ս յիշում, — ասում էին, — միթէ մենք

էր նա: Խնդում էին նրանք, երբ Աստղամանուկը սրածայր ձողով ծակծկում էր խլուրդի թոյլ աչքերը, ու ծիծաղում, երբ նա քարով ընկնում էր բորոտների յետեկից: Ամեն տեղ և ամեն բանում Աստղամանուկն էր նրանց հրամանատարը, և ի վերջոյ նրանք էլ խստասիրտ ու անխիղճ դարձան Աստղամանուկի պէս:

Մի օր մի թշուառ մուրացիկ կին է գալիս այդ գիւղը. նրա հագուստը ծուէն-ծուէն էր, իսկ երկար քարքարոտ ճանապարհ գնալուց այնպէս ջարդուել էին ոտքերը, որ արիւն էր գնում: Վերին աստիճանի ողորմելի տեսք ունէր նա. յոգնած և ուժասպառ գնում նստում է շագանակենու ստուերում, որ մի քիչ շունչ քաշի:

Աստղամանուկը հէնց որ նկատում է նրան, ասում է ընկերներին:

—Մի նայեցէք, ի՞նչ զզուելի մուրացկան է նստել այս գեղեցիկ ծառի տակ: Տղէք, եկէք քշենք նրան այստեղից, որովհետեւ տգեղ ու այլանդակ է նա:

Եւ մօտենալով մուրացկանին, Աստղամանուկը սկսում է քարով տալ նրան ու ծիծաղել քրան, իսկ մուրացկանը սարսափից աչքերը յառում է Աստղամանուկին:

Այսբանը նկատում է փայտահատը, որ մօտակայ փայտանոցում փայտ է լինում ջարդելիս,

այնպէս ենք վարուել քեզ հետ, ինչպէս դու հիմի վարում ես որբ ու տնանկի հետ: Ինչու ես անգութ դէպի բոլոր թշուառները:

Յաճախ ծեր քահանան կանչում էր նրան իր մօտ և աշխատում նրա մէջ սէր զարթեցնել դէպի բոլոր կենդանի էակները: Նա ասում էր.

—Մժեղն ի՞նչ է, նա էլ գոյակից է քեզ—մի վկասիր նրան: Օդում սաւառնող վայրի թոչուններն էլ իրենց ազատութիւնն ունեն—թակարդ մի՛ սարքիր հաճոյքիդ համար: Սղոսկուկն ու խլուրդը նոյնպէս Աստծու արարածներ են և նրանցից ամեն մէկը իր տեղն ունի երկրիս վրայ: Այդ որ իրաւունքովն ես ցաւ ու վիշտ սփռում արար աշխարհում: Զէ՞ որ նոյն իսկ եղիւքաւոր անասունը փառաբանում է Արարիչ Աստծուն:

Բայց Աստղամանուկը ուշադրութիւն չէր դարձնում նրանց ասածների վրայ,—չարաչար ծաղրում էր նրանց ու նորից վազում տարեկիցների մօտ, որոնք ամեն բանում առանց այլ և այլի հնազանդում էին իրեն, որովհետև վազուց արդէն առաջնորդի համբաւ էր վայելում նրանց շրջանում:

Գեղեցիկ էր նա ու ճարպիկ, գիտէր պարել, սուլել և շուի ածել: Ընկերները գնում էին նրա յետեկից, ուր էլ որ տանելու լինէր իրենց և կատարում էին բոլորը, ի՞նչ որ նրամայում

վագում է Աստղամանուկի մօտ և խիստ
ձայնով ասում նրան.

—Անխիղճ տղայ, ի՞նչ է արել քեզ այս
թշուառ կինը. ինչու ես տանջում նրան:

Աստղամանուկը ոտքը խփում է գետնին
ու զայրոյթից կաս կարմիր կտրած ասում.

—Դու հի ես որ իրաւոնք ես բանեցնում
ինձ վրայ: Ես քո որդին չեմ ու պարտաւոր
չեմ հնազանդել քեզ:

—Իրաւ ես ասում, —պատասխանում է
փայտահատը, —բայց չէ որ ես քեզ խղճացի
երբ անտառում գտայ:

Այս խօսքերի վրայ մուրացիկ կինը ճշում
է բարձրածայն և ուշքից գնում: Փայտահատը
նրան վերցնում տեղափոխում է իր տունը, իսկ
կինը սկսում է ուշքի բերել նրան: Վերջապէս,
երբ մուրացկանը ուշքի է գալիս, մարդ ու կին
խնդրում են նրան, որ մի բան ուտի, ուժի առնի:

Բայց նա ոչ մի բանի ձեռք չի տալիս, այլ
սկսում է հարց ու փորձ անել փայտահատին.

—Կարծեմ դու ասիր, որ երեխային անտառումն
ես գտել, արդեօք սրանից տասը տարի առաջ
չէր այդ:

Փայտահատը պատասխանում է.

—Այն, տասը տարի սրանից առաջ գտայ
ես նրան անտառի մէջ:

—Իսկ ի՞նչ գտար երեխայի հետ, —աղա-

ղակում է կինը: —Արդեօք սաթէ մանեակ
չունէր նա վզին: Եւ արդեօք մանուկը չէր
փաթաթուած ոսկէ հիւսուածքից կարած
աստղազարդ վերարկուի մէջ:

—Հէնց այդպէս էր, —ասում է փայտա-
հատը, —այդ բոլորը կար երեխայի հետ:

Եւ մնդուկից հանում է վերարկուն ու սա-
թէ մանեակը և ցոյց է տալիս մուրացկանին:

Իրերը տեսնելով մուրացիկ կինը լալիս է
ու ասում:

—Այդ երեխային ես եմ կորցրել անտա-
ռում, իմ զաւակս է նա: Աղաչում եմ, շուտ
ինձ մօտ բերէք նրան. ամբողջ աշխարհ ման
եմ եկել նրան փնտրելով:

Փայտահատն ու իր կինը գնում են Աստղա-
մանուկին կանչելու:

—Աստղամաննեկ, տուն արի, —ասում են
նրանք, —մայրդ եկել սպասում է քեզ:

Աստղամանուկը զարմացած ու ուրախա-
ցած վագում է տուն, բայց տեսնելով որ իրեն
սպասողը խեղճ կինն է, արհամարհանքով ժըպ-
տում է ու ասում:

—Դէհ, ցոյց տուէք տեսնեմ՝ նրտեղ է մայրս:
Ես այստեղ միմիայն գարշելի մուրացկանին
եմ տեսնում:

Իսկ մուրացիկ կինն ասում է.

—Ես եմ մայրդ:

—Խելագարուել ես, ի՞նչ է, —բարկացած գոռում է Աստղամանուկը։ Մի նայիր շէնք ու շնորհիդ, ես ի՞նչպէս կարող եմ քո որդին լինել։ Հեռացիր, գնա, որ էլ զգուելի դէմքդ չտեսնեմ։

—Բայց այնուամենայնիւ դու իմ զաւակս ես, —բացականչում է մուրացիկ կինը և ծունկ իջնելով ձեռները թախանձանքով կարկառում է դէպինա։ —Ես քեզ անտառի միջով էի տանում, երբ աւաղակները յարձակուեցին վրաս. նրանք քեզ յափշտակեցին ձեռքիցս և, երևի, անտառում ձգել թողել են բախտի ճակատազրին, — շշնջալով շարունակում է նա։ —Բայց ես հէնց առաջին հայեացքից ճանաչեցի քեզ, իսկ այժմ, երբ տեսնում եմ ոսկէ վերարկուն և սաթէ մանեակը, բոլոր կասկածներս փարատուած են արդէն։ Որդեակ իմ, պաղատում եմ քեզ գընանք միասին, — ախր ես ողջ աշխարհ ման եմ եկել քո յետեից։ Եկ ինձ հետ, որդեակս, սաստիկ կարօտել եմ քեզ։

Բայց Աստղամանուկը տեղից չի շարժւում։ Դժբախտ մօր խօսքերը արձագանք չեն գըտնում նրա հոգում. նա լուռ է մնում, ասես քար լինէր սիրտը, միմիայն խեղճ կնոջ հեծեծանքներն էին լսում տիրող լուռթեան մէջ։

Վերջապէս Աստղամանուկը դառնացած, կոպիտ կերպով դիմում է նրան։

—Եթէ իսկապէս դու իմ մայրն ես, ապա

ամենաին չպէտք է երկայիր այստեղ և ինձ շխայտառակէիր այսպէս չարաչար՝ չէ՞ որ ես մինչեւ այժմ Աստղի ծնունդ էի համարում ինձ և ոչ թէ մի հասարակ մուրացիկ կնոջ զաւակ, որպէս ուզում ես հաւատացնել։ Հեռացիր, էլ աշրիս, չերեաս։

—Ա՛խ, որդեակս, —բացականչում է մայրը, — թոյլ տուր գոնէ հրաժեշտի համբոյրը տամ քեզ։ Ա՛խ, ինչպիսի նեղութիւններ ու տանշանքներ եմ քաշել քեզ որոնելիս։

—Ո՛չ, անկարելի բան է, —ասում է Աստղամանուկը, — չափից դուրս այլանդակ ես դու. աւելի շուտ կը համբուրեմ մի օձի կամ դոգոշի, քան թէ քեզ։

Այս ժամանակ կինը վեր է կենում և դառնապէս հեծկլտալով գնում է դէպի անտառ, իսկ Աստղամանուկը սաստիկ գոհ մնալով նրա հեռանալուց, նորից վազում է իր ընկերների մօտ ընդհատուած խաղը շարունակելու։

Բայց ընկերները նրան տեսնելով սկսում են ծաղրել.

—Օ՛հ, որքան նման ես գարշելի դոգոշի ու զազրելի օձի։ Կորիք, մի մօտենար, մենք էլ չենք ուզում հետդ խաղալ։

Եւ նրանք այգուց դուրս են անում Աստղամանուկին։

—Ի՞նչ են խենթ ու խելառ խօսում, —ասում է

63952.67



Աստղամանուկը ինքն իրեն։ — Իսկոյն կրվագեմ աղբիւրը ևնրա ջուրը իմ գեղեցկութիւնը կըցուացնի իր մէջ։

Ու մօտենալով աղբիւրին, նայում է նրա մէջ և սոսկումով տեսնում, որ դէմքը, իրաւ, փոխուել է դոդոշի դնչի, իսկ մարմինն ամբողջապէս ծածկուել օձի թեփիկներով։ Լալով ընկնում է կանաչի վրայ ու միտք անում։

— Անկասկած, Աստուած ինձ պատժել է յանցանքիս համար, որովհետև ես ուրացայ մօրս և դուրս արի նրան։ Ես անգութ ու գոռողվարուցի նրա հետ։ այդ պատճառով կերթամ, կըորոնեմ նրան ամբողջ աշխարհում և հանգիստ չեմ առնի մինչև չգտնեմ նրան։

Հէնց այդ մտածմունքի ժամանակ նրան մօտենում է փայտահատի փոքրիկ աղջիկը։ Նա սիրավիր կերպով ձեռքը դնում է Աստղամանուկի ուսին և ասում։

— Ի՞նչ փոյթ, եթէ առաջուայպէս գեղեցիկ չես դու... Մնա մեզ մօտ. ես երբէք չեմ ծիծաղի վրադ։

Աստղամանուկը պատասխանում է։

— Ո՛չ, ո՛չ, այս այլանդակ դէմքը ինձ տըրուած է որպէս պատիժ մօրս հետ անգութ վարուելուս համար, այդ պատճառով ես պէտք է հեռանամ այստեղից, ման գամ ամբողջ աշխարհում, առանց հանգիստ առնելու որոնեմ

մօրս, գտնեմ ու թողութիւն ինդրեմ՝ նրանից։ Եւ նա փախչում է անտառ ու սկսում կանչել իր մօրը, բայց մայրը չի պատասխանում նրա կանչին։ Մինչև երեկոյ կանչում է նա, իսկ արեկի մայր մտնելուց յետոյ պառկում է փափուկ սաղարթէ անկողնում։ Թոշուններն ու գաղանները, նրա խստասիրտ լինելը գիտենալով, փախչում էին նրա երեսից, այնպէս որ Աստղամանուկը մնում է բոլորից մերժուած։ միմիայն պահապան դոդոշն էր և ծուլօրէն դէպի իրեն սողացած օձը, որ չէին զգւում նրանից։

Առաւօտը զարթնելով, մի քանի դառն հատապտուղ է քաղում թփից, ուտում է և ուղեորւում դէպի անտառի խորքը, անդադար աղի արցունքներ թափելով։ Ճանապարհին նա դիմում է ամեն հանդիպած արարածին ու հարցնում՝ չե՞ն տեսել արդեօք իր մօրը։

Նա հարցնում է Խլուրդին։

— Դու որ թափառում ես գետնի տակ, ասա ինձ՝ այնտեղ է մայրս։

Խլուրդը նրան պատասխանում է։

— Զէ՞ որ դու հանել ես աչքերս։ Ել ի՞նչպէս կարող էի մօրդ տեսնել։

Աստղամանուկը գլուխը քաշ է գցում ու տխուր տրտում առաջ գնում։ Նա հանդիպում է կանեփածտին ու ասում։

—Դու որ թոշում ես ամենաբարձր ծառերի գագաթների վրայով և այնտեղից դիտում բովանդակ աշխարհը,—ասա՞ չե՞ս տեսել արդեօք իմ մօրը:

Կանեփածիտը պատասխանում է.

—Ել ի՞նչպէս թոշեմ ամենաբարձր ծառերի գագաթների վրայով: Չե՞ որ թեատել ես ինձ հաճոյքիդ համար:

Աւելի ծանր է ազդում Կանեփածտի խօսքը: Յուսահատ ու ընկճուած նա շարունակում է առաջ գնալ: Ահա պատահում է եղենու փչակում ապրող Սկիւռիկին:

—Սկիւռիկ, ա Սկիւռիկ, —դիմում է Աստղամանուկը, —չե՞ս տեսել մօրս:

Եւ Սկիւռը պատասխանում է.

—Մայրիկիս սպանեցիր, իսկ հիմա էլ մօրդ ես որոնում՝ երեխ նոյնպէս սպանելու համար:

Այն ժամանակ արտասւում է Աստղամանուկը և գլուխը խոնարհած թողութիւն խնդրում Աստծու բոլոր արարածներից: Ապա սրտապնդւում է, մօրը գտնելու յոյսը նորից շողում է նրա աշքերում և նա հետզհետէ աւելի ու աւելի է մտնում անտառի խորքը. երրորդ օրը հասնում է անտառի ծայրին և այնտեղից իջնում դէպի ցած, դէպի հովիտ:

Գիւղերում հանդիպող երեխաները ծիծա-

զում էին նրա վրայ, իսկ գիւղացիները օթեւան չէին տալիս և նոյն իսկ չէին թողնում շտեմարանում գիշերել՝ վախենալով թէ հացահատիկը կը փչացնի, այն աստիճան զգուելի տեսք ունէր նա. գիւղացիները իրենց բանուորներին հրամայում էին, որ դուրս քշեն նրան գիւղից, և մի հատիկ մարդ չկար որ խղճար Աստղամանուկին: Ու ոչ մի տեղ, ու ոչ ոքից բան չէր կարողանում իմանալ իր մօր մասին, չնայած որ առանց հանդիստ առնելու որոնում էր նրան:

Երբեմն թւում էր Աստղամանուկին, թէ տեսնում է մօրը իրեն առջեկց գնալիս, այն ժամանակ Աստղամանուկը սկսում էր կանչել նրան, վագում էր յետեկց, ուշադրութիւն չգարձնելով սուր-սուր կայծաքարերի վրայ, որոնք արիւնոտում էին ոտները. բայց իզուր, չէր կարողանում նրան հասնել: Իսկ ճանապարհի վրայ գտնուող գիւղերի բնակիչները հաւատացնում էին, թէ ոչ ոք չի անցել, ու ծիծադրում էին նրա վշտի վրայ:

Ամբողջ երեք տարի էր արդէն, որ նա թափառում էր աշխարհիս երեսին, բայց ոչ մի տեղ չէր գտել ոչ ողորմածութիւն, ոչ սէր և ոչ էլ կարեկցութիւն: Կար ժամանակ, երբ նա իր ամբարտաւան գոռողութեամբ իրեն դէմ էր հանում արար աշխարհ—այժմ իր ցանածի

պտուղներն էր քաղում:

Սյսպէս ամենքից ատուած, ամենքից հալածուած մի երեկոյ մօտենում է մի պարսպապատ քաղաքի, որ գտնւում էր գետի ափին. յոգնած ու տանջուած նա կամենում էր անցնել դռնից, բայց դռնապահ զինուորները խաչմերուկ քաշեցին տէգերը և ճանապարհը կտրելով կոպիտ գոռացին նրա վրայ.

—Ի՞նչ գործ ունես քաղաքում:

—Մօրս եմ վնտրում,—պատասխանում է Աստղամանուկը,—խնդրում եմ, թոյլ տուէք քաք մտնեմ, գուցէ այնտեղ կարողանամ գտնել նրան:

Զինուորները հոհուում են նրա խօսքի վրայ, ապա նրանցից մէկը, սկ միրուքը տմբտմբացնելով, գետնի վրայ է դնում վահանը և ասում Աստղամանուկին.

—Հաւատս վկայ, մայրդ շատ էլ չի ուրախանայ, երբ քեզ կըտեսնի, —որովհետև դու աւելի այլանդակ ես, քան ճահճային դոդոշը և աւելի զազրելի, քան տղմի մէջ սողացող օձը:

—Կորի՞ր, կորի՞ր... Սյստեղ չի մայրդ:

Մի ուրիշ զինուոր, որ դեղին դրօշակ ունէր ձեռքին, հարցնում է.

—Ո՞վ է քո մայրը. ինչու ես որոնում նրան:

—Մայրս ինձպէս մի մուրացկան է, —պատաս-

խանում է Աստղամանուկը, —ես շատ վատ վարուեցի նրա հետ, այդ պատճառով աղաչում եմ ձեզ, թողէք քաղաքը մտնեմ, որ թողութիւն ուզեմ նրանից. կարելի է հէնց այնտեղինինա:

Զինուորները թոյլ չեն տալիս մտնել և տէգերն ուղղում են դէպի նա:

Աստղամանուկը լալով հեռանեւմ է քաղաքի դռնից: Հէնց այդ ժամանակ ֆապահակներին մօտենում է մի զինուորական. նա սպառազինուած էր թանգարժէք զէնք ու զրահով, ամբողջ զրահը զարդարուած էր ոսկէքանդակ ծաղկանկարով, իսկ սաղաւարտը՝ թեաւոր առիւծի կերպարանքով: Մօտենում է այս զինուորականը ու հարցնում պահակներին.

—Մի փոքր առաջ հիվ էր ուզում քաղաք մտնել:

—Մի թափառաշրջիկ տղայ էր, մուրացկանի որդի և մենք դուրս արինք նրան, —պատասխանում են պահակները:

—Շատ իզուր, բացականչում է զինուորականը ծիծաղելով, —աւելի լաւ կըլինէր բռնէինք այդ այլանդակ արարածը և իբրև ստրուկ ծախէինք, մի բաժակ լաւ քաղցր գինի կըտային նրա փոխարէն:

Զինուորների մօտից անցնող չար տեսքով մի ծերուկ ձայն է տալիս նրանց, թէ

—Բերէք, ես կառնեմ տղային այդ գնով:

Պահակները բռնում են Աստղամանուկին և
տալիս չար ծերուկի ձեռքը: Ծերը Աստղամա-
նուկին տանում է քաղաքը:

Անցնում են բազմաթիւ մեծ ու փոքր փո-
ղոցներ, վերջապէս կանգ են առնում բարձրա-
բերձ պարսպի մէջ շինուած մի փոքրիկ դռան
առաջ, պարսպի վրայից կախուած էին նոնե-
նու ճիւղեր: Ծերունին դռանը մօտեցնում է
յասպիսից շինուած մի մատանի, և դռւոն ան-
միջապէս բացւում է առանց մի շխկոցի: Նը-
րանք իջնում են հինգբրօնզէ աստիճան և մըտ-
նում մի պարտէզ, որ ամբողջապէս ծածկուած
էր սկ խաշխաշով, իսկ տեղ-տեղ էլ շարուած
էին թրծած կաւի կանաչագոյն սափորներ: Ծե-
րունին այդտեղ յետ է անում իր գլխի մետաքսէ
նախշուն փաթթոցը, նրանով կապում Աստղա-
մանուկի աշքերը և ինչ որ տեղ տանում նրան:
Երբ կապը յետ է անում, Աստղամանուկը տես-
նում է, ինքը գտնուում է ստորերկրեայ մոայլ
բանտում, որ շատ աղօտ լուսաւորուած էր եղ-
ջիւրէ ճրագով:

Ծերունին պնակով մի կտոր բորբոսնած
հաց է դնում առաջը և ասում.—Կեր. մի թաս
էլ աղի ջուր ու ասում.—Խմիր. ապա մնում է
մինչև Աստղամանուկը կուտէր կըխմէր, այնու-
հետեւ դուրս է գնում, ամուր կողպում է դուռը
և երկաթէ ծանր շղթայ զցում վրան:

Հետևեալ առաւօտը ծերունին, որը Լիբիա-
կան բոլոր վհուկների մէջ ամենից երկելին էր
և աշակերտել էր նեղոսեան այրերից մէկում
ապրող մի ֆակիրի¹), մտնում է Աստղամանուկի
մօտ և ահեղ ձայնով ասում:

—Գեաւուրների²) սոյն քաղաքի դռնից ոչ
հեռու, անտառում ոսկէ երեք դրամ կայ թագց-
րած՝ մէկը կտրած է սպիտակ, միւսը՝ դեղին,
իսկ երրորդը՝ կարմիր ոսկուց: Այսօր դու ինձ
համար պէտք է գտնես սպիտակ ոսկէ դրամը.
Եթէ դու այն չբերես, իմացած եղիր, որ ճի-
պոտի հարիւր հարուած կուտես: Վեր կաց, շուտ
գնա, արեի մայր մտնելու ժամանակ պարտէզի
մուտքի մօտ կըսպասեմ քեզ: Լաւ միտդ պահիր.
դրամը գտիր թէ չէ՝ վայն եկել է քեզ տարել.
այնքան կըտամ, հոգիդ կըհանեմ, մի մոռանար,
որ դու իմ ստրուկն ես և քեզ առել եմ մի ըա-
ժակ քաղցը գինիով:

Ապա Աստղամանուկի աչքերը նորից կապում
է մետաքսէնախշուն փաթթոցով, ձեռքը բռնում
տանում է նրան խաշխաշով ծածկուած պարտէզի
միջով. բրօնզէ հինգ աստիճաններով բարձրանա-
լով, բաց է անում ցածլիկ դուռը մատանիով և

¹⁾ Ֆակիր—մենակեաց ճգնաւոր, անապատական:

²⁾ Գեաւուր—անհաւատ. այսպէս են ասում մահմեդա-
կանները քրիստոնեաներին՝ նախատելիս:

Աստղամանուկին դուրս է թողնում փողոց:

Աստղամանուկը դուրս է գնում քաղաքից և դիմում դէպի չար Վհուկի ասած անտառը: Վերին աստիճանի գեղեցիկ անտառ էր, կարծես թէ ամբողջապէս լի էր հոտաւէտ ծաղիկներով ու երգեցիկ թռչուններով. Աստղամանուկը ուրախ-զուարթ մտնում է այնտեղ. Բայց վայ էն մտնելուն՝ ուր ոտք է կոխում նա, գետնի տակից իսկոյն կոշտ փշենի ու տատասկ է բանում, այնպէս որ Աստղամանուկը հազիւ է կարողանում քայլել. թունաւոր եղինձը կծում է նրան, իսկ ոքոզը իր սուր-սուր փշերը ցցում մարմնի մէջ, և Աստղամանուկը յուսահատում է կատարելապէս: Թէև արեածագից մինչև կէս-օր և կէս-օրից մինչև արեամուտ ուշի ուշով փընտրում էր Վհուկի ասած սպիտակ ոսկէ դրամը, բայց այնուամենայնիւ զուր են անցնում որոնումները: Երբ արեան արդէն մօտ էր մայր մըտնելուն, նա երեսը դարձնում է քաղաքի կողմը և դառնագին լալով դիմում դէպի տուն: Անտառի ծայրին համնելով յանկարծ լսում է անորոշ աղեկտուր հեծեծանքներ, ասես անտառի խորքից լինէր հնչուելիս: Իր անձնական դըժբախտութիւնը մոռացած նա յետ է վազում և տեսնում մի փոքրիկ նապաստակ, որսորդի թակարդում ընկած:

Աստղամանուկը խղճում է նապաստակին:

ու ազատում թակարդից, այսպէս ասելով.

—Վերադարձնում եմ քեզ ազատութիւնդ, թէև ինքս մի թշուառ ստրուկ եմ միայն:

—Այն, դու ինձ վերադարձրիր ազատութիւնը... ինչով կարող եմ երախտագէտ լինել,—հարցնում է նապաստակը:

—Ես սպիտակ ոսկէ դրամն եմ որոնում,—պատասխանում է Աստղամանուկը, —և եթէ այն չտանեմ իմ տիրոջը, անխնայ կըթակի ինձ:

—Եկ իմ յետեկցս, —ասում է նապաստակիը, —ես գիտեմ, որտեղ և ինչու է թագցրած այն դրամը:

Աստղամանուկը հնապանդ հետեւում է նապաստակիկին: Շատ են գնում թէ քիչ այդ Աստղամանուկն ու նապաստակիկը գիտեն, կանգ են առնում մի վիթխարի կաղնու տակ, և նապաստակիկը վիթխարի կաղնու ճեղքուածքում ցոյց է տալիս հէնց այն սպիտակ դրամը, որ ամբողջ օրը ապարդիւն որոնում էր Աստղամանուկը: Ուրախացած տղան վերցնում է դրամը և ասում նապաստակիկին:

—Դու լիուլի հատուցիր մատուցածս ծառայութեան համար և հարիւրապատիկ վարձատրեցիր արածս լաւութեան համար:

—Ո՞չ, —պատասխանում է նապաստակիկը, —ես միայն այնպէս վարուեցի հետդ ինչպէս դու ինձ հետ, —ասում է ու արագ փախչում, իսկ

Աստղամանուկը ուրախ-ուրախ վերադառնում
է դէպի քաղաք:

Քաղաքային գուանը մի բորոտ է լի-
նում նստած. նրա գլուխը ամբողջապէս փա-
թաթուած էր մոխրագոյն քաթանով, աչքերի
համար միայն բացած էին երկու փոքրիկ ծա-
կեր, ու նրանց միջից այնպէս էին փայլում
բորստի աչքերը, ասես վառուող ածուխի
կտորներ լինէին: Բորստը հեռուից նկատելով
Աստղամանուկին, տալիս է իր փոքրիկ զանգա-
կը, կոչնակը զարկում ու աղերսալից դիմում:

—Ողորմութիւն արա, մեռնում ես քաղ-
ցից: Ինձ դուրս են արել քաղաքից և չկայ մէկը,
որ խղճայ:

—Աւաղ,—բացականչում է Աստղամանու-
կը, —ես միայն մի հատիկ դրամ ունեմ մա-
ղախիս մէջ և եթէ այն չտանեմ տիրոջս, թա-
կելով կըսպանի ինձ:

Բայց բորստը այնքան է աղաչանք-պաղա-
տանք անում, որ Աստղամանուկը խղճում է նը-
րան և հանում տալիս է սպիտակ ոսկէ դրամը:

Իսկ վհուկն արդէն սպասում էր պարտէ-
զի դուանը. նա ներս է թողնում Աստղամա-
նուկին և հարցնում:

—Բերել ես արդեօք սպիտակ ոսկէ դրամը, —
երբ լսում է. —Չեմ բերել...— յարձակում է
վրան և սաստիկ ծեծում, ապա դատարկ պը-

նակ ու թաս է դնում առաջը աւելացնելով՝
կեր, խմիր, —ու նորից կողպում այն ստոր-
երկրեայ բանտում:

Հետեւեալ առաւօտը Վհուկը դարձեալ դնում
է նրա մօտ և ասում:

Եթէ դու այսօր գեղին ոսկէ դրամը չըերես,
կըպատժեմ որպէս իմ ստրուկի և երեք հարիւր
անգամ ճիպոտ կըքաշեմ վրադ:

Աստղամանուկը գնում է անտառ, ամբողջ
օրը փնտրում է ոսկէ դրամը, բայց չի կարո-
ղանում գտնել: Արկի մայր մտնելու ժամանակ
նա նստում է գետնի վրայ ու լաց լինում:
Յանկարծ մօտն է վագում այն նապաստակիկը,
որի կեանքն ազատել էր նախօրեակին, ու
ասում նրան.

—Ինչու ես լալիս դու և ի՞նչ ես որոնում
այս անտառում:

—Այստեղ, ինչ որ տեղ գեղին ոսկէ դրամ
կայ թագցրած, —պատասխանում է Աստղամա-
նուկը, —և եթէ չգտնեմ այն, իմ տէրը ծեծելով
կըսպանի ինձ:

—Հետեւիր ինձ, —բացականչում է նապաս-
տակիկը և անտառի միջով վազում հասնում է
մի աղբիւրի ու կանգ առնում. այդ աղբիւրի
յատակում Աստղամանուկը նկատում է իր
որոնած գեղին ոսկէ դրամը:

—Ի՞նչպէս յայտնեմ երախտագիտութիւ-

նըս,—ասում է նա նապաստակիկին,—ահա երկը բորդ անգամն է, որ ազատում ես ինձ փորձանքից:

—Ո՞չ, առաջ դու ինձ խղճացիր,—պատասխանում է նապաստակիկը և փախչում գնում:

Իսկ Աստղամանուկը դեղին ոսկէ դրամը դնում է մաղախի մէջ և շտապում դէպի տուն։ Բայց հէնց որ բորոտը նկատում է նրան, վագում է ընդառաջ և ծունկ իջնելով խնդրում։

—Ողորմութիւն արա, մեռնում եմ բաղցից։ Աստղամանուկը պատասխանում է.

—Ես մաղախիս մէջ միայն մի հատիկ դեղին ոսկէ դրամ ունեմ և այն էլ տանում եմ տիրոջս, եթէ չտանեմ, ինձ կըծեծի, որպէս իր ստրուկի։

Բայց բորոտը շարունակում է աղերսել. Աստղամանուկը զիջանում է նրա աղաչանք պաղատանքին, հանում է մաղախից դեղին ոսկէ դրամը ու տալիս։ Ապա գնում է տուն։

Պարտէզի դռնակը բանալով և Աստղամանուկին ներս թողնելով Վհուկը հարցնում է.

—Բերել ես դեղին ոսկէ դրամը.

Երբ տղան պատասխանում է՝ Զեմ բերել,—Վհուկը յարձակում է նրա վրայ և անգութիւնում թակելուց յետոյ շղթայում է նրան ու նորից զցում այն ստորերկրեայ բանտը։

Առաւօտեան Վհուկը մտնում է նրա մօտ և

ասում.

—Եթէ այսօր կարմիր ոսկէ դրամը բերես, ազատութիւն կըտամ քեզ. իսկ եթէ չէ՝ առանց խղճահարուելու կըսպանեմ։

Աստղամանուկը գնում է անտառ ու ամբողջ օրը ուշի ուշով որոնում է դրամը։ Երեկոյեան զէմ նանստում է գետնի վրայ ու արտաստում. այդ ժամանակ նորից մօտն է վագում նապաստակիկը և ասում։

—Քո վնտրած կարմիր ոսկէ դրամը, գտընւում է ահա այն այրում։ Դէ, դադարի՛ր լալուց և ուրախ եղիր։

—Խնչպէս երախտագէտ լինեմ, —բացականչում է Աստղամանուկը, —ահա երրորդ անգամն է, որ դու փրկում ես ինձ վտանգից։

—Այն, բայց առաջ դու ինձ խղճացիր,—ասում է նապաստակիկը ու փախչում։

Աստղամանուկը մտնում է նապաստակիկի ցոյց տուած այրը և նրա ամենահեռաւոր անկիւնում գտնում է իր որոնած կարմիր ոսկէ դրամը, վեր է առնում, գնում մաղախը և շտապ-շտապ գնում դէպի բաղաք։

Բորոտը հեռուից նկատելով մօտեցող Աստղամանուկին, կանգնում է ճանապարհի մէջ-տեղը ու պաղատում։

—Տուր քո կարմիր ոսկէ դրամը թէ չէ կը-մեռնեմ։

Աստղամանուկը դարձեալ խղճում է նրան և ասելով «Քեզ աւելի է այն հարկաւոր, քան թէ ինձ»,—դրամը տալիս է բորոտին։ Բայց խիստ ընկճում է նրա հոգին, որովհետև լաւ գիտէր, թէ ինչ էր սպասում իրեն Վհուկի ձեռքից։

Սակայն քաղաքային դռանը մօտենալով նա զարմացմաք տեսնում է, որ պահակները խոնարհաբար բարեւում են իրեն, ասելով.—Ո՞րքան գեղեցիկ է մեր տէրը։—Իսկ քաղաքացիք խումբ-խումբ գնում են յետևից բարձրածայն աղաղակելով.

—Նա բոլորից էլ գեղեցիկ է աշխարհիս երեսին։

Այն ժամանակ Աստղամանուկը արտասւում է ու մտածում.

—Նրանք ծաղրում են ինձ և դժբախտութեանս վրայ ծիծաղում։

Այնքան բազմութիւն է լինում խոնուած, որ Աստղամանուկը ճանապարհը կորցնում է ու մոլորում։ յանկարծ դուրս է գալիս թագաւորի պալատի դիմաց գտնուող մեծ հրապարակը։

Ու նրա առաջ բացւում են պալատի դրաները և ընդ առաջ դուրս են գալիս այդ բաղաքի քահանաները ու բարձրաստիճան պաշտօնեաները։ Նրանք խոնարհում են Աստղամանու-

կի առաջ և ասում.

—Դու մեր տէրն ես ու մեր թագաւորի որդին, մենք վաղուց սպասում էինք քեզ։

Աստղամանուկը նրանց պատասխանում է.

—Ես ոչ թէ թագաւորի որդի եմ այլ մի թշուառ մուրացկանի տղայ։ Եւ ինչու էք ասում, որ ես գեղեցիկ եմ։ Զէ՞ որ շատ լաւ գիտեմ, թէ ինչ այլանդակն եմ։

Այն ժամանակ առաջ է գալիս ոսկէքանդակ ծաղկանկար զրահ և առիւծաւոր սաղաւարտ կրող զինուորականը և վահանը բռնելով Աստղամանուկի երեսի դիմաց ասում է.

—Իմ տէրը ինչպէս կարող է կասկածել եր գեղեցկութեան վրայ։

Աստղամանուկը նայում է վահանին և տեսնում, որ իսկապէս առաջուայնման գեղեցիկ է ինքը. որ նախկին սիրունութիւնը վերադարձուել է իրեն։ Այժմ իր աչքերում նա մի այնպիսի բան է նկատում, որ մինչ այդ երբէք չէր տեսած։

Քահանաներն և բարձրաստիճան պաշտօնեաները ծունկ չոքելով նրա առաջ ասում են.

—Այսօր կատարուեց հինաւուրց մարգարէութիւնը, որ ասում է թէ՝ մեզ մօտ այդ օրը կըգայնա, որը կոչուած կըլինի մեզ կառավարելու։ Թողող ուրեմն մեր տէրը ստանձնի այս գայիստնն. ու թագը և արդարադատ ու ողոր-

Աստղամանուկը դարձեալ խղճում է նրան
և ասելով. «Քեզ աւելի է այն հարկաւոր, քան
թէ ինձ», — դրամը տալիս է բորոտին։ Բայց
խիստ ընկճում է նրա հոգին, որովհետև լաւ
գիտէր, թէ ինչ էր սպասում իրեն Վհուկի
ձեռքից։

Սակայն քաղաքային դռանը մօտենալով
նա զարմացմաք տեսնում է, որ պահակները
խոնարհաբար բարեւում են իրեն, ասելով. — Ո՞ր-
քան գեղեցիկ է մեր տէրը! — Իսկ քաղաքացիք
խումբ-խումբ գնում են յետեկից բարձրածայն
աղաղակելով.

— Նա բոլորից էլ գեղեցիկ է աշխարհիս
երեսին։

Այն ժամանակ Աստղամանուկը արտասւում
է ու մտածում.

— Նրանք ծաղրում են ինձ և դժբախտու-
թեանս վրայ ծիծաղում։

Այնքան բազմութիւն է լինում խոնուած, որ
Աստղամանուկը ճանապարհը կորցնում է ու մո-
լորւում. յանկարծ դուրս է գալիս թագաւորի
պալատի դիմաց գտնուող մեծ հրապարակը։

Ու նրա առաջ բացւում են պալատի դըռ-
ները և ընդ առաջ դուրս են գալիս այդ բաղա-
քի քահանաները ու բարձրաստիճան պաշտօն-
եաները։ Նրանք խոնարհուում են Աստղամանու-

կի առաջ և ասում.

— Դու մեր տէրն ես ու մեր թագաւորի
որդին, մենք վաղուց սպասում էինք քեզ։

Աստղամանուկը նրանց պատասխանում է.

— Ես ոչ թէ թագաւորի որդի եմ այլ մի
թշուառ մուրացկանի տղայ։ Եւ ինչու էք ասում,
որ ես գեղեցիկ եմ։ Զէ՞ որ շատ լաւ գիտեմ,
թէ ինչ այլանդակն եմ։

Այն ժամանակ առաջ է գալիս ոսկէքանդակ
ծաղկանկար զրտի և առիւծաւոր սաղաւարտ
կրող զինուորականը և վահանը բռնելով
Աստղամանուկի երեսի դիմաց ասում է.

— Իմ տէրը ի՞նչպէս կարող է կասկածել
իր գեղեցկութեան վրայ։

Աստղամանուկը նայում է վահանին և տես-
նում, որ իսկապէս առաջուայնման գեղեցիկ է
ինքը. որ նախկին սիրունութիւնը վերադարձուել
է իրեն։ Այժմ իր աչքերում նա մի այնպիսի
բան է նկատում, որ մինչ այդ երբէք չէր
տեսած։

Քահանաներն և բարձրաստիճան պաշտօն-
եաները ծունկ չոքելով նրա առաջ ասում են.

— Այսօր կատարուեց հինաւուրց մարգա-
րէութիւնը, որ ասում է թէ՝ մեզ մօտ այդ
օրը կրգայնա, որը կոչուած կրլինի մեզ կառա-
վարելու։ Թող ուրեմն մեր տէրը ստանձնի այս
գայիստնն ու թագը և արդարադատ ու ողոր-
3

մած թագաւոր լինի մեզ վրայ:

—Ես այդ պատուին արժանի չեմ, —առարկում է Աստղամանուկը, —որովհետև ես ուրացել եմ հարազատ մօրս և հանգիստ չպէտք է առնեմ, մինչև չգտնեմ նրան ու թողութիւն չուզեմ նրանից: Թողէք ինձ ուրեմն, ես պէտք է թափառեմ երկրէ երկիր. ես ամենենին չեմ մնայ այստեղ, թէկուզ նոյնիսկ գայիսոնն ու թագը տալու լինէք ինձ:

Այս ասելով նա շուռ է գալիս գէպի այն փողոցը, որ տանում էր քաղաքային դռան կողմը: Յանկարծ իրեն շուրջը խոնուող բազմութեան մէջ նկատում է իր մուրացկան մօրը, իսկ նրա կողքին այն բորոտին, որ ամեն օր հանդիպում էր ճանապարհին:

Ուրախ-ուրախ աղաղակելով առաջ է վագում Աստղամանուկը և ծունկ իջնելով մօր առջև, փարւում է նրա վիրաւոր ոտներին, աղի արցունքներով ողողելով նրանց: Գլուխը մինչև գետին խոնարհած և խելայեղօրէն հեկեկալով—ասես թէ պատառ-պատառ էր լինում սիրտը—նա ասում է մօրը.

—Մայր, ես քեզ ուրացայ իմ ամենամեծ հպարտութեանս ժամին: Այժմ դու չհեռացնես, երբ ընկած եմ ես: Մայր իմ, դու ատելութիւն գտար ինձանից, իսկ ես այժմ սէր եմ հայցում քեզանից... Մայր իմ, ես քեզ

վանեցի ինձանից, իսկ դու այժմ ընդունիր քո որդուն...

Բայց մուրացկան կինը ոչ մի խօսք չի ասում: Այն ժամանակ Աստղամանուկը փարւում է բորոտի ճերմակած ոտներին ու ասում:

—Դու որ երեք անգամ կարեկցութիւն գտար ինձանից, ինդրիր իմ մօրից, որ գոնէ մի խօսք ասի ինձ:

Բայց բորոտն էլ լուռ է մնում:

Այն ժամանակ Աստղամանուկը ծանր հառաջելով բացականչում է.

—Մայր իմ, այս տանջանքը վեր է իմ ուժից: աղաչում եմ քեզ՝ ներիր ինձ:

—Վեր կաց, —ասում է մուրացիկ կինը ձեռքը գլխին դնելով:

—Վեր կաց, —կրկնում է բորոտն էլ նոյնպէս ձեռքը գլխին դնելով:

Վեր է կենում Աստղամանուկը և աչքերը բարձրացնելով, զարմացմամբ տեսնում է, որ իր առջև կանգնած են... թագաւորն ու թագուհին:

Եւ թագուհին ասում է նրան.

—Ահաւասիկ հայրդ, որին օգնում էիր դու:

—Ահա քո մայրը, որի ոտքերը դու ողողեցիր քո արցունքներով, —աւելացնում է թագաւորը:

Եւ նրանք գրկում համբուրում են Աստղա-

մանուկին։ Ապա տանում են պալատը և հրամայում արքայական հանդերձներ հագցնել նըրան։ Թագ են դնում զլխին և գայիսոնը տալիս։ Այսպիսով Աստղամանուկը դառնում է գետափին գտնուող քաղաքի լիակատար տէրը։ Նա շատ արդարադատ ու ողորմած թագաւոր է լինում։ Իր երկրից դուրս է քշում չար վճուկին, թագաւորավայել կերպով պարզեատրում է փայտահատին ու իր կնոջը, իսկ նրանց զաւակներին մեծամեծ պաշտօններ է տալիս իր թագաւորութեան մէջ։ Նա թոյլ չէր տալիս, որ անգութ վարուեն գաղանների ու թռչունների հետ և աշխատում էր իր բոլոր հպատակների մէջ սէր, գութ և կարեկցութիւն ներշնչել դէպի Աստծու բոլոր արարածները։ Նա կերակրում էր քաղցածներին ու հագուստ տալիս չունեորներին, և կարճ ժամանակի ընթացքում խաղաղութիւն ու բարօրութիւն հաստատուեց նրա երկրում։

Բայց երկարատև չէր նրա թագաւորութիւնը՝ նրա ուժից վեր էր քաշած տանջանքները և չափազանց ծանր էր նրան ուղարկուած փորձութիւնը, ու նա մեռաւ երեք տարի թագաւորելուց յետոյ։

Նրա յաջորդն արդէն վատ էր կառավարում։



25. Խրամատի եզերքին	10
26. Լուսատոփիկներ	40
27. Կատակերգութիւն գոմի բակում	12
28. Նոր մայրիկն	10
29. Բախտը ինչո՞ւմն էր	8
30. Եօլին եւ Եակին	5
31. Փոքրիկ Լիտնի գաղտնիքը	7
32. Կարլ Լիննէյ	20
33. Ցիսուախ տօնածառը։ Մարգարտածաղիկն ու արտուրը	10
34. Փոքրիկ Հարրիի պարտէզը	15
35. Արքայադրածն ու Թօգուկը	10
36. Աստղամանուկ	10



1133

